




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍկոՏորոնով

Առաջին օգնությունը

հիշանք հեղափոխում

619

U - 57

1926

N 756

С1920. JUL 20 1920

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

619

4-57

Խ.Ս.Հ.Մ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

№ 756

С. 7 аов. 100

№ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 9.

Ա
Ն 2074.

Ա. ՍԿՈՄՈՐՈՒՈՎ

619

Ա-57.

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ

ИНСТИТУТ
ВОССТАНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

Մ Ո Ս Կ Վ Ա

1926

3 1 JUL 2013

8866

Напечатано в типог. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пиминская ул.
д. № 16, в количе-
стве 3.000 экз.
Главлит
№ 54295.

* * *



56785.66

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ.

Ինչ պէտք անել, յետք կենդանու փորք ուռչում ե:

Փորի ուռչելուց ամենից շատ կովերն են տառապում: Այս հիվանդութիւնը ամառը ավելի հաճախ ե լինում: Ուռչելու պատճառները. Յերբ անասունը ուտում ե մեծ քանակութեամբ այնպիսի հյութալից խոտեր, վորոնք ծածկված են ցողով, յեղյամով, կամ թե նոր բուսած առվույտ, վիկ, կաղամբի տերեւներ ե ուտում: Այս հիվանդութեան պատճառը կարող ե լինել և այն, յերբ անասունը կերակրվում ե՝ յերկար ժամանակ մի տեղում պառկած և տաքացած (մզլած) կանաչ խոտով: Ընդհանրապես ամեն տեսակ փշացած և փտած ու մզլած կերը կարող ե փորը ուռցնել:

Սովորաբար այս հիվանդութիւնը շատ արագ ե զարգանում այդպիսի կեր ընդունելուց անմիջապես հետո: Իսկապես, միայն փորոտիքը (թա-

փանն) և ուռչում, իսկ դրանից ուռած և թվում
ամբողջ փորը, առանձնապես՝ ձախ կողմից: Ձախ
փորատակը (աճուկը) այն մասում, ուր սովա-
ծության փոսիկն է, դուրս է ընկնում, ուռչում
է: Ուռած տեղին մատով խփելիս թմբուկի դար-
կի ձայն է լսվում: Այսպիսի վիճակում կենդա-
նին հրաժարվում է կերից, դադարում է վորոճալ,
բերնից թուք է ծորում, անընդհատ ներշնչում,
աչքերը արյունով լցվում են: Կենդանին ծանր
տնքում է և վախեցած տեսք ունի: Արտաթորու-
թյունը դուրս է գալիս փոքրիկ չափերով կամ
թե դադարում է—կենդանին կապ է ընկնում:
Հիվանդության յեղքը սովորաբար կախված է ժա-
մանակին շնորհքով տրված ոգնությունից:

Բուժողները յուր. անմիջապես պետք է մարդ
ուղարկել անասնաբուժի յետևից: Այդպիսի դեպ-
քերում վերջինս գալիս է առանց մերժելու:
Մինչև նրա գալը պետք է ուռած ձախ կողքը
մի լավ տրորել հարդով և ձեռքով շփել: Յեթե
ձեռքի տակ սկիպիդաւ կա, պետք է դրանով
տրորել: Յետույքի անցքից պետք է սապնաջրի
լուծողական ներս տալ: Յիվանդ կենդանուն կա-
րելի յե խմացնել խիարի աղաջուր:

Ամենավերջին միջոցը փորոտիքը մի առան-
ձին խողովակով ծակելն է, բայց այս կարող է
անել անասնաբուժը:

Ձիլերի սանջուկ (խիւս փորացավը):

Նայած տեղին, այս հիվանդությունը շատ
տարբեր անուններ ունի: Ծիշտ անունը սանջու-
կե, խիստ փորացավ: Սանջուկ հիվանդությունը
շատ վտանգավոր է: Ամենից շատ այդ հիվան-
դությունը ամառ ժամանակ է լինում: Պատճա-
ռը կարող է լինել արոտավայրում կամ տանը
չափից դուրս շատ ուտելը, վարսակով կամ գա-
րիշով կերակրելուց հետո ձին արագ քշելը, մի-
անգամից շատ սառն ջուր խմացնելը: Մեծ քա-
նակությամբ նորաբույս առվույտ կամ փտած
ու մգլած խոտ ուտելուց նույնպես կենդանին
կարող է հիվանդանալ: Սանջուկն առաջ է գալիս
և փորաձիճուններից: Ձին կտրվում է կեր ուտե-
լուց, շուտ շուտ դեպի յետ՝ փորի կողմն է նա-
յում, վոտքերը շուտ շուտ փոխում կանգնած
տեղը, առաջին վտաններով գետինն է քերում,
մեկ պառկում է, մեկ՝ վեր կենում: Շուտ շուտ
միգելու կամ արտաթորելու դիրք է ընդունում:
Սովորաբար այդ վիճակում ձին չի կարողա-
նում արտաթորել: Ծանր փորացավի ժամա-
նակ ձին թավալ թավալ է գալիս, վոտքերով
քացի տալիս ու քրտնում: Վերջիվերջո դողդո-
ղում է, շնչասպառ դառնում և ընկնում՝ յեթե

ժամանակին չի տրվում պետք յեղած ողնու-
թյունը:

Բուժոգնությունը. Չպետք է հիվանդ ձին քշել
(չափ գցել): Այդ բանի կարիքը չկա, իսկ դրա-
նից փաստ կարող է լինել: Յեթե ձին թավալվե-
լիս ուժգին յե ընկնում գետին (վորից նրա ներ-
սում պատռվածքներ կարող են առաջ գալ), ապա
կարելի յե մի քիչ ման ածել նրան: Փորը պետք
է մի լավ տրորել հարդով, ավելի լավ է կիսով
չափ ջրախառն սկիպիդարով անել այդ:

Ամենից շատ պետք է տրորել փորի աջ մա-
սը: Լավ կլինե՞ր փորը տաքացնել՝ սպիտակ մար-
գարտածաղկի (յերիցուկ, ромашка) տաք հյու-
թաշուր խմացնելով, իսկ փորի վրա, բացի դրա-
նից, պետք է վորևէ տաք բան կապել:

Իբրև լուծողական, ձիուն կարելի յե խմացնել
կտավատի խաշած հատիկների ջուրը, հետը խի-
արի աղաշուր խառնելով (հավասար չափով).
այդ հեղուկից, մի անգամ ընդունելու համար,
յերեք կամ չորս շիշ պատրաստելով: Կտավատի
խաշաշրի փոխարեն կարելի յե վերցնել պասուց
ձեթը: Յեթե հարեաններից մեկն ու մեկի մոտ
գլխուբերյան լուծողական աղ կա, ապա պետք
է տալ և այդ լուծողականը (մի գրվանքայի
չափ, կամ մի քիչ ավել): Յիյու բերանը բացում
են և լուծողականը ներս լցնում զգուշութամբ,

վորպեսզի ձին խեղդ չգա, չխուփա: Սանջուրի ա-
մեն մի դեպքում պետք է իսկույն անասնա-
բուժին դիմել. սա ամենալավ ճանապարհն է:
Ծայրահեղ դեպքում միայն կարելի յե դիմել
բժշկման տնական միջոցներին:

Թունավոր խոտերով բուժնավորվելը:

Կենդանիներն իրենք շատ լավ ջոկում են
թունավոր խոտերը վնչ թունավորներից: Բայց
հաճախ պատահում է, վոր լավ խոտ չգտնելով,
սոված կենդանին վրա է ընկնում և առանց
խտրության ուտում թունավոր խոտերը:

Ընդհանրապես շատ շատ են թունավոր խո-
տերը, բայց ամեն տեղերում ել չկան նրանք:
Նրանցից շատերը չորանալուց հետո կորցնում
են իրենց թունավոր հատկութունը:

Թունավորվելիս կենդանին շղաձգումներ է
տալիս, կամ, ընդհակառակը, թուլանում է, բերա-
նից թուք է հոսում, հաճախ—փրփուր: Ստամոքսը
խանգարվում է: Կենդանին ծանր ցավեր է զգում
փորի մեջ, փորահարկինք է առաջ գալիս, հաճախ՝
արյունախառն: Մեզը (շեռը) դուրս է գալիս արյան
հետ խառն: Կենդանին քրտնում է, դողում: Վոտ-
ներն ու ականջները պաղում են:

Բուժոգնությունը. Թունավորված կենդանուն

պետք է լուծողական խմցնել, իսկ յետույքի անցքից պետք է առանձին լուծողական տալ: Վորպես լուծողական միջոց, պետք է վերցնել կտավատի խաշած հատիկների թանձր ջուրը կամ թե սովորական պասուց յուղը (ձեթ): Ոգտակար է այդ հեղուկի հետ հավասար չափով խառնել կաղնու կամ ուռենու կեղևի խաշած ջուր: Այսպիսի լուծողական կարելի չե տալ որական յերկու-յերեք անգամ, մի մի շիշ խմացնելով (ինչպես ձիյու, նույնպես և խոշոր յեղջյուրավոր անասունի համար այս քանակը բավարար է): Միաժամանակ, բացի այս բոլորից, կենդանու ամբողջ մարմինը պետք է մի լավ տրորել հարդով: Ծանր ու տևական նվաղումների դեպքում պետք է անասնաբուժ հրավիրել:

Միգարգելումը (գոգկապը կենելը).

Միգարգելումով գլխավորապես տապառում են փորձ և կոտած ձիյերը: Այս հիվանդությունը հաճախ առաջ է գալիս միգաքարերի պատճառով: Այս միգաքարերը լինում են միգափամփուշտի մեջ կամ թե ուղղակի միգանցքի մեջ: Յերբեմն ել միգանցքը փորկե կողմից սեղմված է լինում ուռուցքով: Միգարգելումը կարող առաջ գալ և ջղաձգությունների կամ միգափամփուշտի

կաթվածի դեպքում: Պատահում է փոր մեզի արգելումն առաջանում է մութ - գորշագույն թանձր նյութի շատ կուտակվելուց (անդամի անցքի մոտ): Վերջապես շատ հաճախ ել մեզը արգելվում է այն պատճառով, փոր ձիյուն չեն թողնում ժամանակին միզելու:

Միգարգելման առաջին նշանները նրանից են սկսվում, փոր ձին շուտ շուտ միզելու շարժումներ է անում, պատրաստվում է միզելու, յետին վոտները կղացնում է, պոչը բարձրացնում, սեռական անդամը հանում և փորձում է միզել: Յեթե այս բանը նրան չի հաջողվում, կենդանին սկսում է անհանգստանալ, շուտ շուտ իր փորի կողմն է նայում, առաջին վոտներով գետինն է քերում, պոչը թափահարում, հաճախ և փնչում է, ծանր տնքում ու ընկնում, թավալվում: Հրաժարվում է ուտելուց և խմելուց: Ընդհանուր նշաններով այս հիվանդությունը սանջուն է հիշեցնում:

Բուժոգնությունը. Պետք է փորձել դուրս քաշել ձիյու սեռական անդամը և նայել՝ չկա՞ արդյոք այնտեղ փորկե բան միգանցքի մոտ: Յետուցքի անցքից զգուշությամբ պետք է ձեռքը մտցնել և փորձել հաստ աղիքի ներքին պատի միջով թեթև կերպով ճնշել միգափամփուշտը (այն տեղում, փորտեղ գնդաձև ուռուցք է շո-

շափում ձեռքը,—դա միզափամփուշան է): Այս յեղանակով յերբեմն հաջողվում է միզել տալ հիվանդ ձիւյուն: Ոգտակար է նույնպէս և ազդերների վերին արանքները (սեռական անդամի շուրջը) տրորելը: Հաճախ հերիք է, վոր հիվանդ կենդանին տեղավորվի լայնարձակ շենքի մեջ ու մի առ ժամանակ հանգիստ թողնվի. առանց կողմնակի ոգնության գողկապը կանցնի: Ի հարկէ, ամենից լավը անասնաբուժի ոգնությունն է, վորը այդպիսի դեպքերում մեզը հոսեցնում է առանձին մի գործիքի ոգնությամբ, վոր կա-
sksker է կոչվում: Այս գործողությունը շատ սլարզ է և հեշտ, ու միշտ ել հաջող է վերջանում:

Ինչ անել, յերբ կովը խեղդ է գնացել (բողազում բան է մնացել).

Կովերի կերի մեջ հաճախ լինում են չկտրուտած գետնախնձոր (կարտոֆիլ), շաղգամ, տակն (ճակնդեղ): Պատահում է, վոր ագահությունից կովը միանգամից վրա յե ընկնում կերին և դեռ լավ չծամած՝ կուլ է տալիս շտապ շտապ: Թե՛ այս և թե՛ մյուս դեպքում գետնախնձորը կամ շաղգամը դեմ է առնում վորկորի անցքին ու մնում: Յեթե այս դեմ առած գետնախնձորը կամ շաղգամը

վորկորի միջով ստամոքս չի իջնում, ասում են, թե կովը խեղդ գնաց:

Խեղդ գնացած կենդանին դուրս է ձգում իր գլուխն ու վիզը, առատ թուք է հոսում նրա բերանից և շուտ շուտ սիրտը յետ տալու և հազալու փորձեր է անում: Վերջիվերջո փորը ուռչում է, կենդանին անընդհատ փնչում է, աչքերն արնակալում են, կենդանին վախեցած տեսք ունի և յեթե ժամանակին ոգնություն չհասցվի՝ շատ վատ վախճան կունենա:

Յեթե գետնախնձորը կամ ուրիշ մի առարկա դեմ է առել ու ամրացել է վորկորի հենց սկզբում (վզի մասում), ապա ուղղակի դրսից կա-
բելի յե շոշափել ձեռքով:

Բուժողնոթյունը. Ամենից առաջ պետք է փորձել վորկորին դեմ առած գետնախնձորը կամ շաղգամը նորից յետ քշել բողազը: Այս նպատակով կովի բերանը մի բաժակի չափ պասուց յուղ (ձեթ) են լցնում, իսկ դրսից՝ բողազի շուրջը ուժեղ տրորում են, վորպեսզի դեմ առած առարկան նորից դեպի բողազը գա: Յեթե այս միջոցը հաջողվում է, ապա դրանից հետո պետք է փորձել կենդանու բերանը լայն բաց անել և աշխատել առարկան ուղղակի մասններով բռնել ու դուրս հանել: Յերբ սա չի հաջողվում, պետք է վերջին փորձն անել և դեմ առած առարկան

դեպի յետ, դեպի ստամոքսը քշել: Այս նպատակով պետք է վերցնել ճկուն և բոլորովին վողորկ (դուզ, վրան հարթ) մի ձող, նրա ծայրին վուշից մի փոքրիկ, փափուկ բարձ հագցնել և մի լավ ձյուլթել, վոր հեշտ ներս գնա: Յերբ այս գործիքը պատրաստ է, կենդանու գլուխը բարձրացնում են, բերանը լայն բացում, լեզուն դուրս քաշում, ձողի փափուկ ծայրը զգուշությամբ խոթում վորկորի մեջ և դեմ առած առարկան մի թեթև հրում դեպի ստամոքսը:

Վորքան ել այս գործողությունը հեշտ ու հասարակ լինի, յեթե մոտերքում անասնաբուժ կա, պետք նրան կանչել: Նա իր հետ կվերցնի հատուկ այդ բանի համար հարմարեցրած գործիքը, վորի ոգնությամբ այս գործողությունը շատ հեշտ ու անվտանգ կանցնի:

ԱՐՅՈՒՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.

Սովորաբար արյունհոսությունները լինում են ամեն տեսակ վերքերի ստանալուց հետո: Այս արյունհոսությունների վտանգը ամենից շատ նրանից է կախված, թե ինքը վերքը վորքան մեծ է և մարմնի վոր մասումն է բացված: Վերքերը կարող են շատ խոր լինել, այդպիսի դեպքերում նրանք ավելի վտանգավոր են, քան վոչ

խոր վերքերը, վորոնք առանձին վտանգ չեն ներկայացնում: Լինում են և արյունհոսություններ քթից ու բերանից: Այս արյունհոսությունները շատ վտանգավոր են:

Արյունոտություն ի՞նչպես դադարեցնել. Փոքրիկ փասվածքների ժամանակ դժվար չէ արյունհոսությունը դադարեցնել: Յաճախ բանն առանց ոգնության է անցնում: Արյունհոսությունը դադարեցնելու ամենապարզ յեղանակը պինդ կապ դնելն է: Կապը դնելուց առաջ վերքը պետք է մի լավ լվանալ սառը մաքուր ջրով. ավելի լավ է յեփած ջրով: Վերքի վրա դրվելիք փալասները կամ հնոտիքը պետք է փափուկ և մաքուր լինեն: Արյունհոսությունը դադարեցնել կարելի չէ նույնպես և սառույց, ձյուն դնելով կամ մինչև անգամ վերքի վրա սառը ջուր լցնելով: Ծայրահեղ դեպքում պետք է մի տեղից սկիպիդար ճարել, շորի մի կտոր թրջել նրանով և դնել այնտեղ, վորտեղից արյուն է վազում: Այս միջոցը նույնպես կոգնի: Վոչ սարդի վոստայն, վոչ հող և վոչ ել կավ չպետք է դնել վերքի վրա: Դրանից վոչ մի ոգուտ չկա և դեռ վերքը կարող է կեղտոտվել ու բորբոքվել: Հաճախ հարկ է լինում վերքը կարել. այս աշխատանքը ավելի լավ կանի անասնաբուժը:

Այս պատճառով, դեպքի տեղում անմիջապես

ոգնութիւնն ցուցց տալուց հետո, պետք է անաս-
նաբուժ հրավիրել, վորը կասի, թե հետո ինչ
պետք անել և ինչ միջոցներով բժշկել հիվանդ
կենդանուն: Գթից և բերանից արյուն հոսելու
դեպքում անմիջապէս պետք է դիմել անասնա-
բուժի ոգնութեան:

Ջ ա Ր Ղ Վ ա ծ Բ ն ե Ր ք .

Միշտ ել կենդանիները ջարդվածքներ ստա-
նում են: Մեծ նշանակութիւն ունի, թե վնաս-
վածքը մարմնի վոր մասումն է և, բացի այդ,
ինքը հարվածը վորքան մեծ է յեղել: Սովորա-
բար վնասված տեղը ուռչում է, վոր ինքն իրեն
կարճ միջոցում անցնում է: Վոտներէ սաստիկ
վնասվածքների ժամանակ վոսկորները կարող են
ջարդվել, փշրվել կամ ճեղք ստանալ: Յեթե ուժ-
գին հարվածը կենդանու փորին է կպել, ապա
կարող է ուռեցք, աղեթափութիւն առաջանալ:
Մի խոսքով, վնասվածքները տարբեր են լինում
և այդ պատճառով ել նրանց վտանգը միատե-
սակ չէ: Բոլոր ջարդվածքների ժամանակ կաշին
անվնաս է մնում: Ջարդվածքները կաշվի տակն են:

Բռնոգնութեանը. Աննշան վնասվածքները ա-
ռանց բժշկութեան անցնում, լավանում են: Յե-
թե վնասվածքը մեծ է, այդ դեպքում պետք է

առաջին յերկու յերեք որը վնասված տեղի
վրա սառուցց, ձյուն կամ սառը ջրի մեջ թրը-
ջած քաթանի կտորներ դնել (սառը կոմպրեսս):
Յերը այս սառը կոմպրեսսը տաքանում է,
պետք է կտորները նորից թրջել սառը ջրի մեջ
և նորից դնել: Այսպիսի կոմպրեսսի փոխարեն
կարելի յէ վերցնել թաց, կակուղ կավը և ծե-
փել վնասված տեղին: Սառնութիւնը պահելու հա-
մար ժամանակ առ ժամանակ այդ կավի վրա
սառը ջուր պետք է լցնել: Յեթե յերկու-յերեք
որից ուռուցքը չի անցնում, սառն կոմպրեսսի փո-
խարեն պետք է ջերմացնող կոմպրեսս դնել՝ խո-
տի մանրուքից տաք փաթաթապան սարքելով:
Այսպիսի ջերմացնող կոմպրեսսը շատ հասա-
րակ յեղանակով է արվում: Ամենից հարմարը
այս է—վերցնում են յերեսսրբիչը, մի յերեք
չորս տակ ծալում, թրջում ջրով ու դնում հի-
վանդ տեղին, իսկ վրայից սկզբում կլեոնկայի
կամ մեղրամոմաթղթի մի կտոր են դնում և
հետո՝ վորեւ տաք բան: Այս բոլորը վրայից
կապում են շորի կտորներով և որը մի անգամ
փոխում, յերեսսրբիչը նորից թրջելով և նորից
դնելով:

Ուռուցքը տրորելը (մասսաժ) նույնպէս շատ
լավ է ոգնում: Մասսաժը անում են սովորա-
կան յուղով կամ վազելինով: Վտանգավոր վնաս-

վածքների դեպքում պետք է անմիջապես անասնաբուժին դիմել:

Յեղջուրների վնասվածքները.

Յեղջուրների վնասվելու շատ դեպքեր կան: Յերբեմն յեղջուրն ամբողջովին է վնասվում, իսկ պատահում է, վոր յեղջուրի միայն վրայի պատյանն է տեղից դուրս գալիս: Լինում են դեպքեր, յերբ յեղջուրը թեև մի փոքր ջարդվում է, բայց դեռ ամուր է:

Բուժոգնությունը. Յեթե յեղջուրը բոլորովին է կտրված, այդ դեպքում ջարդված մասը անմիջապես պետք է գատել, իսկ կտրված տեղին ձյութ քսել (անիվի մագուլթ): Յեթե յեղջուրը կտրված է, բայց դեռ լավ է պահվում, ապա պետք է ցաված, ջարդված տեղը մի լավ լվանալ և ծառի կեղևից կամ փոքրիկ հարթ փայտերից ամրացնող կապ դնել վրան: Արյունհոսության դեպքում կարելի յե սեղմող կապ հարմարացնել: Յեթե յեղջուրի միայն պատյանն է տեղից խաղացել, այդ դեպքում կարելի յե բավականանալ բացված մասերին անիվի մագուլթ քսելով: Յեթե յեղջուրի վրա դրած կապը չորանում է և կպչում, այդ դեպքում կապը քանդելուց առաջ կապած տեղը պետք է մի քիչ թրջել

և կապը զգուշությամբ բանալ: Յեթե տեղում կա անասնաբուժ, պետք է նրա խորհուրդը հարցնել:

Այրվածքներ յեյ գրասխարքյան դեպքերը.

Այրվածքի դեպքերը լինում են հրդեհի ժամանակ, յեռման ջրի, գանազան զրգուիչ դեղերի հետ անզգուշ վարվելուց, կրի գործարաններում աշխատելիս և այլն: Պատահում է, վոր այրվում է կենդանու միայն բուրդը, մաղերը, մասամբ ել՝ կաշին: Ավելի ծանր այրվածքների ժամանակ կաշվի վրա բշտեր են առաջանում, ինչպես ասում են՝ վառած տեղը բշտում է: Մա աղեն վտանգավոր է: Յրտահարությունից զրկավորապես հավերն են վնասվում: Ամենից շատ նրանց կատարներն ու թշիկներն են յենթակա ցրտին: Թեև այրվելու և ցրտահարվելու պատճառները տարբեր են, բայց թե՛ մեկ և թե՛ մյուս հիվանդություններն ել միատեսակ են:

Բուժոգնությունը. Թեթե այրվածքների ժամանակ կարելի յե բավականանալ այրված տեղերի վրա սառը թրջուկներ դնելով: Ոգտակար է նույնպես կրախմավը մանրել և փոշին այրված տեղի վրա ցանել: Հավերի ցրտահար կատարներն ու ականջները նախ պետք է ճուշտվորել և ապա տաք

99-58795

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



բնակարան տանել նրանց: Հետո արդեն, վերելում հիշած սառը թրջուկները դնել: Սաստիկ այրվածքների դեպքում այրված տեղը պետք է փաթաթել մաքուր սոդայի լուծվածքի (սոդան ջրի մեջ բացած) մեջ թաթախած լաթերով: Յեթե ձեռի տակ սոդա չկա, պետք է կանեփի հատիկները խաշել և այդ թանձր ջուրը գործածել կամ թե հենց միայն կանեփի ձեթ քսել ու փաթաթել: Յեթե հավերի կատարներն ու ականջները սաստիկ կապտել են ցրտից և, ինչպես ասում են, թափվում են, ավելի լավ է անասնաբուժին դիմել:

Ծծերի բորբոսումը.

«Ստինքախտ»

Ծծի բորբոսումը կամ թե ստինքախտը (ցավը) ամենից հաճախ կովերն են ունենում: Պատճառները սրանք են. — յերբ կենդանին մարմնի այդ մասում վնասվածք կամ վերք է ստացել, յերբ պտուկները անմաքուր են կամ ծծի վրա չանգովածքներ կան: Կովը կեղտոտ մատներով կթելիս նույնպես բորբոսման վտանգ կա: Հիվանդությունը սովորաբար սկսվում է այսպես. միանգամից տմրանում է ծծի մի կամ յերկու չորրորդական մասը: Ավելի հաճախ ծծի

յետին մասն ի վնասվում, քան թե առաջին: Այսպիսի ամրացումը (ավելի ճիշտ՝ ուղղացքը) առաջին որերին ամուր և ապք է թվում ձեռքով շոշափելիս, վորից և կենդանին ցավ է զգում: Կթելիս կաթը կամ բուրդովին դուրս չի գալիս, կամ թե մակարդված (մերված) է թափվում: Հիվանդությունը տեական դառնալու դեպքում բանը կարող է հասնել ծծի թարախակալման:

Բուժոցևոքումը. Նախ պետք է կովի ծիծը մի լավ լվանալ և ուշի ուշով նայել, թե չկան արդյոք փոքրիկ վերքեր կամ չանգովածքներ: Առաջին յերկու յերեք որը ուղղացքի վրա սառն կոմպրեսս պետք է դնել: Կարելի յե ուղղակի ձյուն կամ սառույց դնել ծծի վրա (տակից կապելով): Ծիծը հնարավորին չափ հաճախ պետք է կթել, յեթե մինչև անգամ քիչ կաթ լինի մեջը: Լավ է ոգնում տրորելը (մասսաժը): Այս բանի համար պետք է վերցնել կովի սովորական հալած յուղը: Յեթե ձեռի տակ կամֆորայի յուղ կա, ամենից լավն է նրանով տրորել:

Հիվանդությունը տեական դառնալու դեպքում չպետք է բժշկելը դադարեցնել և անհրաժեշտ խորհուրդների համար պետք է դիմել անասնաբուժին:

Ձիյու սմբակի վնասվելը:

Սմբակի վերին մասի վնասվելը առաջանում է այն դեպքում, յերբ ձին մի վտրքի պայտով իր մյուս վտրքի սմբակն է կոխում: Այս բանը հաճախ պատահում է շեղապտույտի ժամանակ, յերբ կենդանին չհասցնելով մի վտրքը տեղից փոխելը, մյուսով կպչում է նրան: Գարնանը՝ ձյան հալհլոցին և աշնանը՝ սառած գետնի վրայով քայլելիս ձին ազատ չի այդ վտանգից: Նույնը և ձմեռը՝ խորը ձյունի միջով անցնելիս: Վատ պայտելը նույնպես կարող է պատճառ լինել այդպիսի վնասվածք ստանալու: Լինում են և այնպիսի ձիեր, վորոնց վտանները քայլելիս անպատճառ դիպչում են իրար ու վերք բաց անում:

Այս բոլոր վնասվածքները կամ վերքերը սովորաբար ցավ են պատճառում ձիյուն և ուռչում են: Ցավից ձին հաճախ սկսում է կաղալ. յերբեմն էլ վտրքը այդ մասում թարախակալվում է:

Խռոցոցնորայունը. վնասված վտրքի այդ մասը պետք է մի լավ լվանալ և գտնել վերքի տեղը: Վերքի շուրջը պետք է լավ մաքրել, խուզելով մաշկերը: Յեթե սմբակի մի մասը պոկվել է ու դեռ վրան է մնում, պետք է դա կտրել, զատել սմբակից, իսկ վերքի մեջ ընկած մազերը հանել: Այս բա-

նից հետո վերքը պետք է լավ լվանալ և վրան յող քսել ու մաքուր շորի կտորով փաթաթել:

„Մ ե խ ի ր ց կ ց ե լ ր“.

Մեխի ընկնելը կարող է լինել այն դեպքում, յերբ ձին վատ է պայտած: Անշնորհք պայտառը միշտ էլ այսպիսի վնաս հասցնում է ձիյուն, յերբ պայտի մեխը ավելի խորն է խփում, քան պետք է: Այդպիսի դեպքերում սմբակի մաստ տեղերը վիրավորվում են: Լինում է, վոր մեխը այդ տեղերը չի մտնում, այլ՝ մոտենում է, և այդպիսով ճնշում է մսապատերը: Յեթե պայտելուց անմիջապես ձին սկսում է կաղալ, պարզ է վորնա մեխի է ընկել, այսինքն մեխերից մեկը, յերբեմն էլ մի քանիսը շատ խորն են գնացել: Իսկ յերբ ձին պայտելուց մի քանի որ հետո յե սկսում կաղալ, պետք է իմանալ, վոր մեխը մոտեցել է մսոտ մասերին և սեղմում է: Վորը մեխ ընկած ձին ավելի սաստիկ կկաղա կոշտ ճանապարհով գնալիս: Տեղումը կանգնելիս ձին բարձրացնում է այդ ցաված վտրք, իսկ յեթե փոքրիկ մուրճով հերթով թեթև հարվածներ տանք մեխերի գլխներին, ձին վտրք յեռ կքաշի այն դեպքում, յերբ հարվածը խոր գնացած մեխի գլխին է գալիս: Յեթե պայտի աքցանով («քալ-

փաթին») սմբակի այդ մասը սեղմենք, կենդանին խիստ ցավ կզգա:

Բուժոգնորքունը. Անպիշապես պետք է ցաված վոտի պայտը հանել և լավ կլինի՝ առաջին մի քանի օրը ձիու աչք վոտի վրա սառն կոմպրեսս դնել ձյունից կամ սառույցի կտորներից:

Յեթե կաղալը չի անցնում, պետք է ձին ցույց տալ անասնաբուժին:

Քրճնած ժամանակ ձիուն ստոր ջուր տալուց առաջացած հիվանդությունը կոչվում է — սեքսկների սուր փուրկացավ: Այս հիվանդությունամբ ձին այն ժամանակ է բռնվում, յերբ արագ արշավից անմիջապես հետո թույլ են տալիս, վոր նա քրտնած դրությունմբ ուղածի չափ սառը ջուր խմի: Բայց այս նույն հիվանդությունը կարող է առաջանալ և այն դեպքում, յերբ նրան չափից դուրս կուշտ կերակրում են հատիկներով—հաճարով, վարսակով, գարիյով: Սմբակների հիվանդության այսպեսի դեպքեր պատահում են մազյան ձիերի հետ, ծանր ձնդաբերությունից հետո:

Հիվանդությունը յերեան է գալիս նրանով, վոր միանգամից ցավում են ձիու առաջի զույգ սմբակները: Յերբեմն ել պատահում է, վոր հի-

հանդուժյունը բռնում է նրա բոլոր՝ չորս սմբակները: Հիվանդ ձին կանգնած ժամանակ առջևի վոտները սովորականից շատ է առաջ դնում, իսկ յետի վոտները փորի տակն է քաշում: Սա նշան է, վոր առաջին սմբակներն են բռնված, և այդ յեղանակով ձին ուզում է մարմնի ծանրությունը յետին վոտների վրա առնել, վոր թեթևացնի առաջին հիվանդ սմբակների ցավը: Այս հիվանդությամբ բռնված ձիերը սովորաբար դժվարությունմբ են քայլում կուշտ ու չոր ճանապարհով: Վոտատակը սեղմելիս սուր ցավ են պատճառում հիվանդ կենդանուն: Սմբակները շոշափելիս կզգանք, վոր նրանք տաք են:

Բուժոգնորքունը. Յեթե ձին պայտած է, այդ դեպքում պետք է անմիջապես պայտերը հանել և սմբակները մաքրել: Յերբեք չպետք է սմբակներից արյուն առնել: Այս միջոցով միայն մի կարճ ժամանակ սմբակների ցավը կմեղմանա, իսկ ինքը հիվանդությունը դրանից ավելի կվատանա: Սմբակների վրա միշտ պետք է ձյուն, սառույց կամ թե սառն կոմպրեսներ դնել: Բացի այդ, կարելի չէ սմբակները թաց կավով ծեփել և յերբ չորանում է, կավի վրա շուտ շուտ սառը ջուր լցնել: Այսպես սառնությունը պետք է պահպանվի այնքան ժամանակ, մինչև վոր սմբակների տաքությունն անցնի:

Ձիյոււ ամբողջ մարմինը պետք է արորել հար-
դով: Ավելի լավ է այդ մասսաժը սկիպիդարով
անել (կիսով չափ ջրախառն):

Լավ կլինի, վոր հիվանդ ձիյուն արվի մի բա-
ժին լուծողական՝ գլաուբերյան աղախառնու-
րով: Յեթե հնարավորություն կա, այդ դեպքում
պետք է ձիյուն անմիջապես անասնաբուժին ցույց
տալ:

Ո գ ն ու ը յ ու ն ր ծ ն ն գ ա բ եր ու յ ա ն ժ ա մ ա ն ա կ .

Յերբ ծննդաբերությունը կատարվում է ինչ-
պես պետք է, այդ դեպքում կողմնակի վոչ մի
ոգնություն պետք չէ կենդանուն: Նա ինքը ամե-
նից լավ է տանում այդ վիճակը: Բայց յերբեմն
պատահում է, վոր ծնունդը դժվարանում է ու
կենդանին յերկար տանջվում է: Ահա ա՛յս ժա-
մանակ է, վոր անհրաժեշտ է միջամտել:

Այդպիսի դեպքերում ամենից առաջ պետք է
պարզել, թե իրոք ի՞նչ է խանգարում կանոնա-
վեր ծննդաբերությանը: Գուցե դրա պատ-
ճառն այն է, վոր արգանդի պտուղը շատ մեծ
է և կամ թե այդ պտուղը անկանոն դիրք ունի
արգանդի մեջ: Պարզելու համար, թե մոր ար-
գանդում պտուղը ինչ դիրք ունի, ամենից առաջ
պետք է ձեռքով շոշափել այն: Այս նպատակով

նախ պետք է ձեռները պատրաստ ունենալ,
այսինքն՝ յեղունգները կտրել, սապոնով լավ
լվանալ և յուղի մեջ թաթախել, վոր լպրծուն
լինի: Սրանից հետո ձեռքը ծալած մատներով
մտցնում են ծննդաբերական անցքի մեջ և այդ-
տեղ զգուշությամբ շոշափում պտուղի դիրքը:
Կանոնավոր ծննդաբերության ժամանակ դուրս է
գալիս պտուղի նախ գլուխը կամ յետևի վոտ-
ները: Մնացած բոլոր դեպքերում ծննդաբերու-
թյունն արդեն անկանոն է: Ծանր ու անկանոն
ծննդաբերության ժամանակ կարելի չէ փորձել
միմիայն կովի՛ն ոգնել, վորովհետև մաղյան ձի-
յուն ոգնելիս ամենաանշան անզգուշությունից
շատ ծանր բարդություններ են առաջ գալիս:
Յեթե ձեռքով քննելիս հաստատ գիտենք, վոր
կովի արգանդի պտուղը կանոնավոր դիրք ունի,
իսկ ծննդաբերությունը ձգձգվում է ծննդաբեր
անցքերի նեղության պատճառով, այդ դեպքում
կարելի չէ ոգնել պտուղի դուրս գալուն: Այս
նպատակով հորթուկի վոտներին պետք է փա-
փուկ պարան կապել և ուժգին ցավերի (յեր-
կունքի) ժամանակ փոքր առ փոքր պարանից
ձգել: Առանց յերկունքի ցավերի ու ձգումների՝
ընդհանրապես շատ վտանգավոր է հորթուկին
դուրս քաշել:

Յեթե պտուղը անկանոն դիրք ունի արգան-

դի մեջ, պետք է փորձել ուղղել: Լինում է, վոր անկանոն են դրված մեկ կամ յերկու վոտիկները: Լինում են և դեպքեր, յերբ միայն գլուխն է անկանոն դիրք ընդունած:

Վոտիկները կամ գլուխն ուղղելիս ամենից առաջ պետք է փորձել հորթուկի ամբողջ մարմինը յետ քշել, դեպի արգանդի խուրքը և նոր միայն պետք յեղած շրջումներն անել:

Յեթե գլուխը կողքի յե կամ մարմնի տակը, այդ դեպքում ուղղելը մեծ դժվարությամբ է կատարվում: Ընդհանրապես պետք է ստել, վոր անկանոն ծննդաբերության ժամանակ բավական դժվար է ոգնելը:

Համենայն դեպս ամենից լավ կլինի անմիջապես անասնաբուժ կանչել: Բնավ ցավ չէ, յեթե կովը մի ավելորդ ժամ կամ ավել միջոց (մինչև անգամ մի ուր և ավելի) կտանջվի: Դրանից նա շունչը չի փչի:

Ծ Ն Ն Պ ա ջ ե ր մ ր .

Այս հիվանդությամբ ամենից հաճախ բռնվում են գեր (չաղ), կաթնառատ կովերը, թեթև ու կանոնավոր ծննդաբերությունից հետո: Առաջին անգամ ծնող կովերը քիչ դեպքերում են հիվանդանում այս հիվանդությամբ:

Հիվանդության առաջին նշանները հանկարծ են յերևում — ծնելուց մի կամ յերկու յերեք ուր հետո: Սկզբում աչքի յե ընկնում կենդանու քնած, թմրած դրությունը, իսկ հետո շատ արագ կերպով մարսողությունը խանդարվում է և յետույքը թուլանում, դուրս է գալիս: Բացի այդ, հիվանդ կովը թույլ է, կանգնելիս՝ յերերվում է տեղում, շուտ շուտ պառկում է, գլուխը դեպի կողքը շրջում: Աչքերը փակ են, շնչառությունը դանդաղում է և խռխուցի ձայներ են լսվում: Կուլ տալ շատ է դժվարանում կամ թե բոլորովին չի կարողանում ծամածը կուլ տալ: Ստամոքսը և աղինքները ուռչում են, վորից ամբողջ փորն է ուռած յերևում. առաջ է գալիս փորկապություն: Մարմնի ներքին ջերմությունը (տաքությունը) զգալի չափով ընկնում է: Յեղջուրները, ականջներն ու վոտները սառչում են: Յեթե քորոցով ծակենք մարմնի մի տեղը, կովը չի զգա: Հիվանդությունը շատ արագ է ընթանում: Մի ուրից հետո մահը կարող է վրա հասնել:

Բուժողնորոքումը. Քանի վոր հիվանդ կովը կուլ տալ չի կարող, խմելու վոչ մի բան նրան չպետք է տալ: Բժշկության ամենալավ միջոցն է առանձին գործիքի ոգնությամբ ող ներս փչելը: Ամեն մի անասնաբուժ ունի զրա համար

հատուկ գործիք: Առանց ժամանակ կորցնելու պետք է դիմել անասնաբուժին:

Ի՞նչ պես է լինում, վոք ծիւր*) չի բնկնում:

Ծինի չընկնելու դեպքերը կովերի հետ ավելի հաճախ են պատահում, քան թե այլ կենդանիների հետ: Այս վիճակին ավելի յենթակա յեն լղար և ուժասպառ կովերը: Սովորական պայմաններում կովերի ծինը ծննդից հետո կախ է մնում 3—8 ժամ: Յեթե ծինը կախ է մնում առաջին յերկու-յերեք օրը, դա դեռ առանձին մեծ վտանգ չէ: Ժամանակ առ ժամանակ կովը զուռ է տալիս: Ծինի ճնշումից փակվում է միզանցքը և կովը չի կարողանում միզել: Յերրորդ կամ չորրորդ օրը (իսկ ամառը ավելի վաղ) ծինը սկսում է հոտել: Արտաքին տեսքով նա յելիի դույն է ստանում: Ծննդից մի շաբաթ հետո ծննդաբերական անցքերից պղտոր-ցեխանման ջուր է դուրս գալիս, վոր նեխած սուր հոտ ունի: Այդ հեղուկի հետ թել թել դուրս են գալիս ծինի առանձին մասերը:

Կովն ախորժակից ընկնում և շատ արագ լղարում է. կաթը ցամաքում է: Յեթե բժշկու-

*) Թաղանթ, վորի մեջ մայրական արգանդում պտուղը դարդանում է, և վորը ծննդից հետո ընկնում է:

թյան միջոցներ ձեռք չեն առնվում ծինը գցելու համար, այդ դեպքում կովը արգանդի հիվանդություն է ստանում, վորը տևական ընթացք ունի: Այս հիվանդության հետևանքով կովը կարող է այլևս անընդունակ դառնալ ծնելու:

Բուժողնորայունը. Յեթե ծինը մինչև դեռին է հասնում, այդ դեպքում պետք է կտրել մոտավորապես մինչև ծնկներն հասնող մասը: Վատ չի լինի, յեթե ամեն օր մի յերկու անգամ ծինը թեթև ձգենք: Յերբեմն բանը սրանով էլ վերջանում է և ծինն ինքն իրեն ընկնում է: Լավ կլինեք, վոր ծննդաբերական անցքերը շուտ շուտ վողողվեյին կրեոլիկի ջրով: Այս բանի համար պետք է ունենալ ռետինե խողովակ և ծագար: Կրեոլինի ջուրը այսպես է պատրաստվում. մի շիշ ջրին լցնում են մի ճաշի գդալ կրեոլին: Յեթե ծինի ընկնելը ուշանում է, պետք է խորհրդակցել անասնաբուժի հետ:

Յեզրակացություն:

Այս գրքույկի մեջ խոսեցինք այնպիսի հիվանդությունների մասին, վորոնց ժամանակ կարելի չէ առաջին ոգնությունը ցույց տալ հիվանդ կենդանուն՝ մինչև անասնաբուժի գալը:

Վարակիչ հիվանդությունները այստեղ չեն

հիշված*)։ Պետք է նկատի ունենալ, Վոր յերբ միանգամից մի քանի կենդանիներ միաժամանակ են հիվանդանում և նրանց բոլորի հիվանդությունն ել միատեսակ նշաններ ունեն, պետք է յենթադրել, Վոր նրանք բոլորն ել նույն հիվանդությունը են բռնված և դրանց պատճառը մեկ է։ Այսպես ե լինում վարակիչ հիվանդությունների ժամանակ, մեկ ել՝ թունավորվելու դեպքերում։

Այս բոլոր դեպքերում ել անմիջապես պետք է հայտնել անասնաբուժին, Վորպեսզի հիվանդության առաջը ժամանակին առնվի և հիվանդությունը չտարածվի։

*) Տես՝ «Կենդանիների վարակիչ հիվանդություններ» գրքույկը, հրատարակություն ԽՍՀՄ ժող. կենտր., Հրատ., Մոսկվա, 1926.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

— Հ ա յ կ ա կ ա ն ս ե կ ց ի ա —

Մոսկվա, Նիկոլսկի զոդ. № 10.

- Ի. ՍՏԱԼԻՆ.—Գյուղացիական հարց։ Գինը 50 կոպ.
Ի. ՍՏԱԼԻՆ.—Ազգային հարցը։ (Տպագրվում է)։
Վ. ԼԵՆԻՆ.—Պատգամներ լեռնատարղության. գինը 15 կ.
Ն. ԿՐՈՒՊՍԿԻՍ.—Լեռնի պատգամները ժողովրդական լուսավորության մասին։ Գինը 20 կ.
Զ. ՅԱՎՈՐՍԿԻՍ.—Կլարա Ֆեկին (կենսագր.)։ Գինը 10 կ.
Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ.—Ազգային հարցը լեվ դպրոցը։ Գինը 40 կ.։
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտությունը 1 ասիանանի դպրոցում։
Ն. ԵԼԻՋԱՐՈՎ.—Ի՞նչ վորո՞ւնց կուսակցության XIV համագումարը։
Ա. ԴՄԻՏՐՅԵՎ.—Տգիտությունը լեվ սնահավասությունը։ Գինը 15 կոպ.
-
- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ.—Գյուղատնտեսական հարկ։ Գինը 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիության պահանջները լեվ խորհրդային դպրոցի ծրագրերը։ Գինը 12 կոպ.
Պ. ՎԼԱՍՈՎ.—Հողի մեակումը յերաժի ժամանակ։ Գինը 40 կոպ.
Լ. ՅՈՂԵՅՈՎԻՉ.—Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոպերաքիան գյուղում)։ Գինը 30 կոպ.
Ի. ՊՐԻՅՄՊՈԼՍԿԻ.—Աստու կամքը բե՞ գյուղատնտեսական գիտությունը։
ԳՈՒԳԼԻՆ.—Փորոզ վայտից մինչեվ տակտոս։
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ.—Թե ինչպես կարելի չե գյուղում ելեֆտականություն անցկացնել։
Ա. ՍԿԱՄՈՐՈՒՆՈՎ.—Առաջին ոգնությունը ճիվանդ կենդանուն։

- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները:
- Ն. ՍԵՄՆՇԿՈ.—Թռախոս. (պատկերազարդ):
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխաների վարակիչ հիվանդությունները:
- Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր. (պատկ.) Գիրք 25 կ.
- Ա. ՍՊԵՐՆԱՍԿԻ.—Մոր ալբուբենը. (պատկ.):
- Ն. ՍԵՄՆԿԻՆ.—Առեվը, նրա վորդիները յեվ քոռները: (Տպագր.):
- Ա. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ.—Ուղտից մինչեվ այերուպլան: (Տպ.):
- Վ. ՅԱԶՎԻՅԿԻՅ, —Մարդկային բնակարանի պատմութ.:
- Մ. ԳՈՐԿԻՅ.—Յերիսասարդ գրողը: Մարդը:
- Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ.—Պատմվածքներ:
- Դ. ՄԱՄՈՆ-ՍԻԲԻՐՅԱԿ.—Մոծակի յեվ արջի մասին: (Պատկերազարդ): Գիրք 13 կոպ.:
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.—Համբողջություն այերուպլանով: (Պատկերազարդ): Գիրք 20 կոպեկ:
- Պ. ՈՐԼՈՎԵՅ.—Քիմիկոս Կուզկան: (Պատկերազարդ): Գիրք 25 կոպեկ:
- Ա. ԿՈՒՊՐԻՆ.—Յերկրի խորքերում: (Պատկերազարդ): Գիրք 15 կոպեկ:
- Ա. ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպես էյին ապրում սիկնիկները յեվ ինչ արեց արեինն զինվորը: (Պատկերազարդ): Գիրք 16 կոպ.:
- Ա. ԿՐԱՎՉԵԱԿՈ.—Ինչպես Սաֆոն կարմիր բանակային դարձավ: Գիրք 35 կոպ.:
- Ֆ. ՖՈՔՍ.—Միևիստ մեկ ժամով: (Պատկերազարդ): Գիրք 20 կոպեկ:
- ՅԵ. ՌԱԴԻՆ.—Պիոներ, պահպանիր առողջությունը: Գիրք 10 կոպեկ:
- ՌԻԺՈՎ.—Պատանի պիոներ: (Ժողովածու): (Տպագր.):

Գիմել' Центриздату, Москва, Никольская 10.

Կամ' Հայաստանի Պետհրատին:



8866